# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան «3» ապրիլի 2018 թ.
ժամը՝ 17⁰⁰

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Մ. Թովմասյան |
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Ս. Անանյան, Վ. Թովմասյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Գ. Միրզոյան, Լ. Նիկողոսյան |
| Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀծ) | Մ. Առաքելյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
1.2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
1.3. Հանձնաժողովի ընդունած որոշումները:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների ամբողջական նկարագրերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

**Ընդունել ի գիտություն:**

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի մարտի 28-ին, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ապրանքների ամբողջական նկարագրերի վերաբերյալ տեղեկությունները: Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

## 3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

**Ընդունել ի գիտություն:**

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի մարտի 28-ին, Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում ստացվել է անհրաժեշտ տեղեկատվությունը համաձայն որի մասնակիցը բավարարում է հրավերով սահմնավածմասնակցության իրավունքի պահանջներին:

## 4. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1.1. Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/07 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «Հույս-Մոտոր» ՍՊԸ -ին,
1.2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը,
1.3. Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով ՀՀ-ԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/07 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

## 5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | ________ | Մ. Թովմասյան |
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | ________ | Ս. Անանյան |
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | ________ | Վ. Թովմասյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | ________ | Գ. Միրզոյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | ________ | Լ. Նիկողոսյան |
| Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀծ) | ________ | Մ. Առաքելյան |